ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.06.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/50

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Ա. Ոսկանյանի (լիազորագիր տրված՝ 05.06.2020թ.),

Ք. Պեպելյանի (լիազորագիր տրված՝ 05.06.2020թ.),

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչ

Վ. Ոսկանյանի (լիազորագիր տրված՝ 05.06.2020թ.),

«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի տնօրեն

Հ.Մարտիրոսյանի (պետական գրանցման համար՝ 290.110.688347),

քննելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար վարչական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով գնանշման հարցման (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից 26.05.2020թ. ներկայացված (27.05.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/50 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 26.05.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար վարչական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել սույն թվականի մայիսի 19-ին ժամը 10:30:

Գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան: Մայիսի 23-ին Պատվիրատուն ոչ ավտոմատ ծանուցմամբ մասնակիցներին հրավիրել է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը կայացել է մայիսի 25-ին:

Համաձայն հրավերի 8.7 կետի գ) ենթակետի՝ բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը: Գտնում ենք, որ բանակցությունների վարման օրը ճիշտ չի հաշվարկվել:

Ըստ Հրավերի 4.3 կետի 2-րդ ենթակետի՝ Մասնակիցը ներկայացնում է.

իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր).

«Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1 չի նշել իր կողմից առաջարկվող և ոչ մի ապրանքի մակնիշ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Սակայն Պատվիրատուն «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի հայտը համարել է բավարար և շտկում չի պահանջել:

Բանակցությունները սկսվելուն պես մենք ներկայացրեցինք մեր առարկությունները գնահատող հանձնաժողովին, նշեցինք Կարգի համապատասխան հոդվածը, ըստ որի վերը նշված մասնակցից պետք է Պատվիրատուն պահանջեր շտկում: Մեզ պատասխանեցին, որ իրենք լավ գիտեն օրենքը: Մենք առաջարկեցինք նաև զանգահարել ֆինանսների նախարարության թեժ գծին: Գնահատող հանձնաժողովը մեր այս առաջարկն էլ մերժեց և պնդեց, որ իրենց հարմար է տվյալ Մասնակցի ներկայացրած հայտի Հավելված 1.1-ը և շարունակեց բանակացությունները՝ պնդելով որ այս փուլում միայն գնի առաջարկներ են քննարկվում, ներկայացրեք Ձեր գնային առաջարկը, հետո գնացեք բողոքեք:

Հարկադրված մենք մասնակցեցինք գների նվազեցման բանակացություններին, Հրավերի 1-ին չափաբաժնի համար /Գազօջախ էլեկտրական վառարանով/ առաջարկելով 107500 ՀՀ դրամ 1 միավորի համար/ ներառյալ ԱԱՀ-ն, բայց միաժամանակ հայտարարելով, որ խախտվել է Կարգի 41-րդ հոդվածը և մենք բողոքարկելու ենք բանակցությունների անցկացումը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. պարտավորեցնել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով գնահատող հանձնաժողովին՝ Կարգի 41-րդ կետի համաձայն Մասնակցից պահանջել շտկում:

2. չեղարկել սույն թվականի մայիսի 25-ին կայացած բանակցությունները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.06.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված միջնորդությամբ, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ, ներգրավվել է ԳԲՔԱ-ՆԳ-2020/50 բողոքով՝ որպես երրորդ կողմ:

«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն 05.06.2020թ. ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար գնանշման հարցման եղանակով, որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով, «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն մասնակցելով «Վարչական սարքավորումների» ձեռքբերման «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75» ծածկագրով գնման ընթացակարգին՝ մասնակցության հայտ է ներկայացրել 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիներին: Գնման գործընթացը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին համապատասխան: «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն ներգրավվել է, որպես երրորդ կողմ:

Բողոք բերելու հիմքերն ու հիմնավորումները.

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է, չհիմնավորված՝ բոլոր ասպեկտներով՝ իրավական և ընթացակարգային առումներով.

Գնահատող հանձնաժողովի՝ համակարգողի կողմից գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների ծանուցումն ուղարկվել է ոչ թե մայիսի 23-ին, այլ մայիսի 22-ին /հիմնավորումը կցվում է/:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 41-րդ կետի դրույթները կիրառելի են, եթե առկա է անհամապատասխանություն: Գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է բավարար մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան:

Նախապատմությունը՝

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն հայտ էր ներկայացրել գնման ընթացակարգի 1-ին (Գազօջախ էլեկտրական վառարանով գինը՝ 4 550 000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն) և 5-րդ (Սառնարան գինը՝ 8 575 000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն) չափաբաժիններին: 1-ին չափաբաժնին հայտ էին ներկայացրել «Ռեալ Բուսինեսս» և «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ները, իսկ 5-րդ չափաբաժնին միայն «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն: Գնման գործընթացը իրականացվել է «Գնումների մասին» օրենքի (այսուհետև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն: Գնումների օրենսդրության համաձայն գնահատող հանձնաժողովը հրավիրում է գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ (այսուհետև՝ Բանակցություն) այն մասնակիցներին որոնց հայտերը գնահատել է բավարար: Գնահատող հանձնաժողովի նիստին «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները իմպերատիվ կերպով պարտադրում էին, որ «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը չպետք է մասնակցի Բանակցությանն ու Ընկերության հայտը պետք է մերժվի, քանի որ գազօջախ էլեկտրական վառարանի մակնիշը նշված չէ: Գնահատող հանձնաժողովի կազմը հայտնեց, որ հայտով ներկայացված հավելված 1.1-ում նշված առաջարկվող ապրանքների ամբողջ նկարագիրը համապատասխանում է մրցույթի հրավերի պահանջներին, ուստի և հանձնաժողովը գնահատել է բավարար: «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները սպառնալով, որ « ..... կբողոքեն ..... » ընդհուպ միջամտելով հանձնաժողովի գործառույթներին՝ ստիպելով գնումների համակարգողին տվյալ պահին անմիջապես նիստերի դահլիճից զանգահարել ֆինանսների նախարարության թեժ գծին և պահանջել իրենց պահանջի պարզաբանումը: Գնահատող հանձնաժողովը տեղեկացրեց «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին, որ նիստը հրավիրված է Բանակցությունների համար: Նիստին մասնակցում էին ևս երեք ընկերության ներկայացուցիչներ այլ չափաբաժիններով: Բանակացություններին ներկա որևէ մեկը չի հարկադրել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին մասնակցելու բանակցություններին: Դեռ ավելին «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները Բանակցություններին մասնակցում էին ակտիվորեն, քանի որ գները նվազեցվում էին 500-1000 դրամով, մոտավորապես յուրաքանչյուրս 14 անգամ: Նվազագույն գնային առաջարկը «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ինն էր՝ 106 800 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, մեկ միավորի գինը, իսկ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ինը՝ 107 500 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, մեկ միավորի համար: «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հրաժարվեցին 107 500 դրամից պակաս գինը նվազեցնելուց:

Բանակցության արդյունքում նախարարությունը կտնտեսի 812 000 դրամի ընդհանուր խնայողություն:

Հարց է առաջանում, եթե «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը չներկայանար բանակցությանը, արդյոք «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հանձնաժողովից կպահանջեին մերժել ընկերության հայտը:

Ի դեպ 5-րդ չափաբաժնով «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հրաժարվեցին նվազեցնել սառնարանի գինը 8 575 000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Տվյալ չափաբաժնին գնային առաջարկ էր ներկայացրել միայն «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն:

«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն առաջարկվող գազօջախ էլեկտրական վառարանով ապրանքի ամբողջ նկարագիրը՝ ներկայացրել է հետևյալ կերպ

Հ/հ	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	Արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
1	Գազօջախ էլեկտրական վառարանով	Carino	Carino	Carino	Մակերեսը գազ/ էլ. - 3-1, էլեկտրական կայծով միացող: Վանդակացանցերի տեսակը – մետաղական: Էլեկտրական ջեռոցի տարողություն - առնվազն 63լ: Կոնվեկցիա համակարգով, ժամանակաչափով, ներքին լուսավորությամբ: Երաշխիքը՝ առնվազն 1 տարի:

Որոշման 21-րդ կետի 1-ին մասը սահմանում է, որ պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ

պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

Գնանշման հարցման մրցույթի հրավերի օրինակելի ձևը այդ թվում հավելվածների օրինակելի ձևերը, հաստատվել են ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանի համաձայն և հրապարակվել են գնումների պաշտոնական տեղեկագրում:

Որոշման 32-րդ կետով սահմանվում է, որ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ Հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Որոշմամբ նշվում է՝ եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընկերությունը գնման հայտով, մասնավորապես հավելված 1.1-ով ներկայացրել է գազօջախ էլեկտրական վառարանով ապրանքի ամբողջ նկարագրի նվազագույն պահանջները՝ ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը, տեխնիկական բնութագիրը: Գնումների օրենսդրությունը հնարավորություն է ընձեռնում հնարավորության դեպքում նշել ապրանքային նշանը, մակնիշը, եթե առկա է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ մտավոր սեփականությունը օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում ու կարգով ճանաչվում է քաղաքացու կամ իրավաբանական անձի բացառիկ իրավունքը մտավոր գործունեության օբյեկտիվ արտահայտված արդյունքների և դրանց հավասարեցված

իրավաբանական անձի, արտադրանքի, կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների անհատականացման միջոցների (ֆիրմային անվանում, ապրանքային նշան, սպասարկման նշան և այլն) նկատմամբ (մտավոր սեփականություն):

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի բողոքը առարկայազուրկ է և չի կարող բավարարվել.

1.«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի սուբյեկտիվ, ոչ ստանդարտ մոտեցմամբ կարող է խախտվել Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպման սկզբունքները: Մասնավորապես՝ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն մի կողմից փորձելով ազդել Գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումների նկատմամբ, մյուս կողմից՝ գնահատող հանձնաժողովին ստիպել գնահատումն իրականացնել այլ կերպ, ի օգուտ իրեն՝ ցուցաբերելով կանխակալ և հայեցողական դիրքորոշում, ընդհուպ փորձելով յուրացնել Գնահատող հանձնաժողովի գործառույթները: Գնահատող հանձնաժողովը ամբողջությամբ առաջնորդվել է Օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով, այն է՝ հայտերը գնահատվում են Հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, մասնավորապես մրցույթի հարավերի 7.2 կետով սահմանված է, որ հայտերը գնահատվում են մրցույթի հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Տվյալ պարագայում գնահատումն իրականացվել է մրցույթի հրավերի և այլ իրավական ակտերի պահանջներին խիստ համապատասխան.

2.«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, այդուհանդերձ, հարկ է նկատել, որ տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովի որոշումը բովանդակային առումով վարչական ակտին բնորոշ ակտ է, քանի որ համապատասխան մասնակցի և պատվիրատուի միջև պայմանագիր կնքելու հարցն ուղղակիորեն պայմանավորվում է այդ որոշմամբ: Հետևաբար՝ համանման հարաբերություններ կարգավորող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքը («Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը») օրենքի

անալոգիայով կիրառելի է նաև գնահատող հանձնաժողովի գործունեության նկատմամբ: Ավելին, անգամ անկախ մեջբերված դրույթից և իրավահարաբերության տեսակից (վարչական կամ քաղաքացիաիրավական), տվյալ կոնկրետ իրավահարաբերության յուրաքանչյուր մասնակից իր գործողություններում կաշկանդված է օրենքով կամ այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակով և իր իրավազորության տիրույթից դուրս որևէ գործողություն պետք է որակվի որպես հակաիրավական արարք: Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: Հակառակ դեպքում ստացվում է, որ գնահատող հանձնաժողովը ենթարկվելով ճնշումների, անուղղակի սպառնալիքների կարող է շրջանցել օրենքները, ընդունել կամայական որոշումներ: Արդյունքում կարժեզրկվեն այդ հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող իրավանորմերը՝ վերածվելով հռչակագրային դրույթների և, որպես հետևանք, կձևավորվի անկանխատեսելի իրավակիրառ պրակտիկա, ինչը հարիր չէ իրավական պետությանը: Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը գնահատումն իրականացրել է վերաբերելի օրենքների և այլ իրավական ակտերի շրջանակներում, ինչպես նաև մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան: Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքների վրա: Բացի այդ, Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք: Վերջինս երաշխավորում է գնումների մասնակիցների հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանումն ու կիրառումը, այդ թվում խտրականության դրսևորմանը: Սահմանադրության 59-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական,

ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են: Ինչին և ուղված է եղել Գնահատող հանձնաժողովի գործողությունները մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպում:

ՈՒսումնասիրելով գնումների պաշտոնական տեղեկագրում արտացոլված տեղեկատվությունն ու մի շարք այլ փաստական հանգամանքներ կարելի է եզրակացնել, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն ձգտում է պետական գնումների կենցաղային տեխնիկայի ձեռք բերման գործընթացում զբաղեցնել գերիշխող դիրք:

3. Ամփոփելով վերոգրյալը, ակներև է, որ Գնահատող հանձնաժողովը գնման գործընթացում ապահովել է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման հնարավորությունը: Ցուցաբերել է միատեսակ իրավունքի կիրառում, բացառելով խտրական վերաբերմունքի առերևույթ դրսևորումներ՝ ապահովելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները: Բացի այդ, Գնահատող հանձնաժողովը ապահովել է նաև օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթի կազմակերպման սկզբունքները:

Վերոգրյալ պայմաններում, անվիճելի է դառնում այն հանգամանքը, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի գործողություններն ու ներակայացրած բողոքը անհիմն է, առարկայազուրկ և ենթակա է մերժման»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.06.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացրած փաստերը և հիմնավորումները.</u>

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ

քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հայտարարվել է ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով գնման ընթացակարգ:

2020 թվականի մայիսի 22-ին www.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցմամբ մասնակիցները հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների /կցվում է/, որը տեղի է ունեցել սույն թվականի մայիսի 25-ին: Սույն թվականի մայիսի 23-ին Համակարգի միջոցով ծանուցում է ուղարկվել մասնակիցներին, ի լրումն 22.05.2020թ-ի ծանուցման, տեղեկացնելով, որ 2 մասնակիցների հայտեր գնահատվել են անբավարար և վերջիններս չեն կարող մասնակցել բանակցություններին /կցվում է/: Ակնհայտ է, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պնդումը սխալ է և չի համապատասխանում իրականությանը և բանակցությունները վարվել են՝ չխախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությունը:

Ինչ վերաբերվում է այն պնդմանը, որ հավելված 1.1-ը «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատախան, հայտնում եմ, որ վերջինիս կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը լիովին համապատասխանում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, լրացված են հավելված 1.1-ով սահմանված բոլոր դաշտերը: Գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

Ղեկավարվելով կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակացությունների և բնականաբար, «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի հայտը վերագնահատելու առաջարկությունը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է, քանի որ մասնակիցների հայտերի գնահատումը բացառապես Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի իրավասությունն է և նիստի օրակարգում եղել է միայն գների նվազեցումը:

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» և «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ների միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, ընտրված է ճանաչվել «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն և համաձայն Կարգի 32-րդ

կետի 12-րդ ենթակետի՝ պայմանագրի նախագծում ներառվելու է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը, հետևաբար «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն պարտավորվում է մատակարարել Հավելված 1.1-ին համապատասխան ապրանք:

Միաժամանակ Ձեզ եմ ներկայացնում գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը և ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.06.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար վարչական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» և «Ռեալ Բուսինեսս» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.05.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշել է, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, նիստը կասեցնել մինչև 25.05.2020թ. ժամը 12:00-ն և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

3. Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ 25.05.2020թ. 1-ին չափաբաժնով գների նվազեցման շուրջ միաժամանակյա

բանակցություններին մասնակցեցին «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» և «Ռեալ Բուսինեսս» ՍՊ ընկերությունների ներկայացուցիչները: Արդյունքում «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչն առաջարկեց վերջնական մեկ միավորի գին՝ 107 500 դրամ, իսկ «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն՝ 106 800 դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Այնուհետև «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին առաջարկեց մերժել «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի հայտը, քանի որ Ընկերությունը 1.1 հավելվածում առավել մանրամասն չի նշել առաջարկվող ապրանքի մակնիշը: Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի առաջարկը, քանի որ բանակցությունների նիստին հրավիրվել են բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները և նիստի ընթացքում պետք է քննարկեն բացառապես գները:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի՝ 26.05.2020թ. ներկայացված բողոքը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գրությունը, «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից վարչական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» և «Ռեալ Բուսինեսս» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.05.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշել է, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, նիստը կասեցնել մինչև 25.05.2020թ. ժամը 12:00-ն և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ 25.05.2020թ. 1-ին չափաբաժնով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին մասնակցեցին «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» և «Ռեալ Բուսինեսս» ՍՊ ընկերությունների ներկայացուցիչները: Արդյունքում «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը առաջարկեց վերջնական մեկ միավորի գին՝ 107 500 դրամ, իսկ «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն՝ 106 800 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Այնուհետև «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին առաջարկեց մերժել «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի հայտը, քանի որ Ընկերությունը 1.1 հավելվածում առավել մանրամասն չի նշել առաջարկվող ապրանքի մակնիշը: Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի առաջարկը, քանի որ բանակցությունների նիստին հրավիրվել են բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները և նիստի ընթացքում պետք է քննարկեն բացառապես գները:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի հրավերով Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ներկայացված է հետևյալ տեսքով.

Հավելված 1.1
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

_____-ն ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75

մասնակցի անվանումը

ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը

«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտի թիվ 1.1 Հավելվածով ներկայացրել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հետևյալ տեսքով.

Հ/հ	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	Արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
1	Գազօջախ էլեկտրական վառարանով	Carino	Carino	Carino	Մակերեսը գազ/ էլ. - 3-1, էլեկտրական կայծով միացող: Վանդակացանցերի տեսակը – մետաղական: Էլեկտրական ջեռոցի տարողություն - առնվազն 63լ: Կոնվեկցիա համակարգով, ժամանակաչափով, ներքին լուսավորությամբ: Երաշխիքը՝ առնվազն 1 տարի:
2	Հեռախոս լարային	BEKTOP	BEKTOP	BEKTOP	Աշխատանքի տոնային և իմպուլսային ռեժիմներով, ունի հեռախոսահամարի վերահավաքման և ձայնի կարգավորման հնարավորություն: Երաշխիքը՝ առնվազն 6 ամիս:
3	Տպիչ բազմաֆունկցիոնալ	HP	HP	HP	Տեսակ- մոնոխրոմ լազերային, երկկողմանի տպագրության հնարավորությամբ, ցանցային Ֆունկցիոնալություն - տպիչ, սկաներ, պատճենահան:

					Պատճենահանման չափս- A4: Ծանրաբեռնվածությունը ամսական կտրվածքով- առնվազն 8,000 էջ: Պատճենահանման/տպման արագություն- առնվազն 23 էջ րոպեում: Լար - USB տպիչի համար: Օպ. հիշողություն- առնվազն 256 ՄԲ: Միակցման տեսակ- USB 2.0 Hi-speed: Երաշխիքը՝ առնվազն 1 տարի:
4	Հեռուստացույց	LG	LG	LG	Ձայնային ուժգնություն (Վտ)- առնվազն 20: Ձայնային համակարգ- Dolby Digital: Անկյունագիծ- առնվազն 43 դյույմ: Էկրանի տեսակը- LED: Հաճախականություն (Hz)- առնվազն 60: Կետայնություն- առնվազն 3840x2160 4K: DVB: T2-T-C, SMART Android, Wi-Fi, USB-2, HDMI-3: Երաշխիքը՝ առնվազն 1 տարի:

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերությամբ սահմանվում է, որ ***հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է*** ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ ***հրավերով նախատեսված դեպքերում*** նաև ***առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):***

Ընդ որում՝ Հրավերի 4.3 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Այսպիսով՝ վերը նշված նորմերով հստակ սահմանվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Մինչդեռ, ուսումնասիրելով ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչպես նաև «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, արձանագրում եմ, որ այն չի համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջին, այն է՝

Ընթացակարգի հրավերի թիվ 1.1 Հավելվածով սահմանվել է ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը, մինչդեռ «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն մասնակցության հայտում ներառված թիվ 1.1 Հավելվածով 1, 2, 3 և 4 չափաբաժինների համար իր կողմից առաջարկվող ապրանքների մակնիշներ, ապրանքային նշաններ և արտադրողի անվանումներ սյունակներում նշել է միևնույն անվանումները, ըստ էության չի նշել ապրանքների մակնիշները և արտադրողի անվանումները, որոնց պահանջը հստակ սահմանված է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 2-րդ ենթակետով:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ գտնում եմ, որ Պատվիրատուն, «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչելով ընտրված մասնակից, գործել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջների խախտմամբ, քանի որ նման պայմաններում «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի հայտի նկատմամբ կիրառելի է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությունը:

Քանի որ Կարգի 41-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի տնօրենի կողմից բողոքի քննության նպատակով 05.06.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի ընթացքում հնչեցված այն տեսակետին, որ ապրանքը կարող է արտադրվել գործարանային պայմաններում և մակնիշ չունենալ, ապա այս տեսանկյունից հարկ եմ համարում նշել, որ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված՝ Հավելված 1.1-ում նշվել են LG և HP միջազգային ապրանքային նշաններ, այսինքն՝ այնպիսի միջազգային ապրանքային նշաններ ինչպիսիք են LG և HP չեն կարող չունենալ մակնիշ, ուստի վերջինիս նման դիտարկումը հիմնավոր չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից 26.05.2020թ. ներկայացված բողոքը բավարարել, պարտավորեցնել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/75 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. չեղարկել 2020 թվականի մայիսի 25-ին կայացած բանակցությունները:
2. սույն որոշման հիմնավորման շրջանակներում «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի մասով կիրառել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և 41-րդ կետով սահմանված պահանջները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**